Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1999



Ltn
1405

ԾԱՂՐԱԲԱՆՈՒԹԻՒՆՔ

ԴԱՍԱՐԻՆ ԽՕՍԱՆՅԻ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ Ի ԳԱՂՂԻԱՐԵՆԷ

Ի. Յ. Տ.

Ի ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԶՄԻՒՌՆԻԱ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԵԱՆ

1858

648

Հ. Ի. ԳՐԱԴԱՐԱՆ

Հ. ՍՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

28 ֆ. 1407

+1405-60+

43783-4-1.

ԾԱՂԻԿԱԲԱՆՈՒԹԻՒՆԵՔ

ԱՆԱՐԱՏՏԻՆ ԽՕՃԱՆՑԻ

ԳՐԱԴԻՒ

1.

Օր մը Նասրէտտին էֆէնտին ժողովրդեան քարոզ տալու համար ամպիոնին վրայ ելաւ, և ըսաւ։ «Ո՛վ Հաւատացեալք, ձեզ ինչ պիտի ըսեմ, գիտէ՞ք։ — Ոչ, Խօճա էֆէնտի, պատասխանեցին ունկնդիրները, չենք գիտեր։ — Թէ որ ըսելիքս չէք գիտեր, ուրեմն ինչո՞ւ պիտի ըսեմ...»։ Ուրիշ օր մը՝ դարձեալ ամպիոնին վրայ ելլելով. «Ո՛վ Մահմետականք, ինչ պիտի ըսեմ, չէ՞ք գիտեր»։ Ամենքնին ալ «Գիտենք» պատասխանեցին։ — Եթէ գիտէք, կրկնեց Խօճան, ինչ կ'ուզէք որ ըսեմ»։ Անմիջապէս ամպիոնէն վար իջաւ ու անկէց դուրս ելաւ։ Ժողովուրդը շփոթած խորհուրդ ըրին որ եթէ Խօճան դարձեալ նոյն հարցմունքը իրենց ընելու ըլլայ՝ կէսերնին պատասխանեն թէ՝ գիտենք, միւս կէսերնին ալ թէ՝ չենք գիտեր։ Առաջուան պէս Խօճան օր մը՝ ամպիոնին վրայ ելաւ, և պոռաց. «Ո՛վ եղբարք իմ, գիտէ՞ք թէ ձեզի ինչ պիտի խօսիմ»։ Կէսերնին պատասխանեցին թէ՝ գիտենք, միւս կէսերնին ալ թէ՝ չենք գիտեր։ — Ուրեմն, կրկնեց Խօճան, ձեր մէջէն անոնք որ գիտեն՝ թող չգիտցողներուն սորվեցընեն»։

2.

Օր մը՝ Խօճա Նասրէտտին էֆէնտին ամպիոնին վրայ ելաւ և ըսաւ. «Ո՛վ Մահմէտականք, աս քաղաքին կլիման մեր քաղաքին կլիմային կը նմանի...—Ո՞ւսկից գիտես, Խօճա էֆէնտի, հարցուցին ժողովուրդը։ — Ինչու որ, պատասխանեց Խօճան, հոս որչափ սատղ կայ նէ՝ Ազշէհիրի մէջ ալ նոյնչափ կայ»։

3.

Օր մը՝ Խօճան բաղնիք մը մտաւ, ու տեսնելով որ հոն մարդ չկայ, և մինակ սիրտը կը նեղանայ, սկսաւ իր գլուխը եկածները երգել։ Տեսնելով որ իր ձայնը գեղեցիկ կ'ելլէ, ինքն իրեն ըսաւ. «Քանի որ ես այսչափ գեղեցիկ ձայն մ'ունիմ, պէտք է որ ամէն մարդ ալ լսէ»։ Շուտով բաղնիքէն դուրս ելաւ, ու ճիշտ կէս օր ժամանակ՝ ֆէնէրի մը վրայ ելաւ և սկսաւ առտուան աղօթքը երգել։ Մարդ մը, անկից անցնելով, տեսաւ որ ֆէնէրին վրայ մարդ մը ելեր ու առտուան աղօթքը տարաժամ կ'երգէր։ «Ո՛վ անմիտ, պոռաց, այս ժամուս և այդպէս անճառնի ձայնովդ առտուան աղօթքը կ'երգես»։ Խօճան կ'իջնայ ու կ'ըսէ անոր. «Ո՛հ, որչափ աղէկ կ'ըլլար՝ եթէ բարեկամ մը ֆէնէրին վրայ բաղնիք մը շինել տար, որով այսպիսի անճառնի ձայնէ մը աղաղակէինք»։

4.

Օր մը՝ Նասրէտտին Խօճա էֆէնտին Կոնիա քաղաքը հասնելով փոխնդավաճառի (հէլվաճը) մը խանութը կը մտնէ, և «Յանուն Աստուծոյ» ըսելով կ'ըսկսի փոխինդ ուտել։ «Էյ, ինչ կ'ընես հոգ», կ'ըսէ անոր

փոխնդալաձառը, քանի մը սատանի հարուածներ իջեցընելով։ Խոճան կը պատասխանէ անոր. «Աս ինչ գեղեցիկ քաղաք է Իկոնիա քաղաքը, ուր ծեծով փոխինդ կը կերցընեն»։

5.

Ռամազանը հասած ըլլալով՝ նասրէտտին Խոճան օր մը ինքն իրեն այս խորհրդածութիւնն ըրաւ. «Ի՛նչ հարկ է ինծի որ ժողովրդեան նմանիմ ու ծոմ բռնեմ»։ Անօթ մը կը հոգայ, ու կըսէ. «Ամեն օր աս անօթին մէջ մէյ մէկ քար կը նետեմ և երբ երեսուն օրը լմննայ՝ Պայրամ կ'ընեմ»։ Ուստի կ'ըսկսի ամեն օր մէյ մէկ քար նետել անօթին մէջ։ Սակայն Խոճային աղջիկը ըսա դիպաց ափ մը քար առնելով անօթին մէջ կը նետէ։ Օր մը Խոճային կը հարցընեն թէ՝ «Ամսոյն քանին է»։ Նոյն օրն ալ 29ն էր։ «Քիչ մը համբերեցէք, կ'ըսէ, երթամ նայիմ»։ Իր տունը կ'երթայ, անօթը կը պարպէ կը համրէ ու կը նայի որ 120 քար կայ մէջը։ «Եթէ այս թիւը անոնց ըսեմ, կ'ըսէ ինքն իրեն, զիս անմոռ տեղ պիտի դնեն»։ Ժողովրդեան քովը կու գայ. «Այսօր ամսոյն 45ն է, կ'ըսէ։— Բայց, Խոճա, կ'ըսեն, մէկ ամիսը 30 օր է, ու դուն կ'ըսես թէ այսօր ամսոյն 45ն է։ — Ես շատ արդարութեամբ խօսեցայ, պատասխանեց Խոճան. եթէ անօթին հաշուին նայէի, այսօր ամսուն 120ն ըլլալու էր»։

6.

Օր մը Խոճային հարցուցին թէ. «Երբ լուսինը կը նորոգի՝ հինը ինչ կ'ընեն։ — Կտոր կտոր կ'ընեն, պատասխանեց Խոճան, և անոնցմով աստղ կը շինեն»։

7.

Օր մը Խոճան կարաւանով քաղքէն դուրս ելլելով՝ միտքը դրաւ որ անոնց առաջէն երթայ. և ըսաւ որում հետը ուղտ մը ունէր. մտածեց որ փոխանակ ոտքով երթալու՝ ուղտը հեծնայ։ Կարաւանին հետ ճամբան շարունակելու տեսն՝ ուղտը ոտքը քարի մը կը զարնէ, Խոճան վար կը գլտոր է, և անոր վրայ կ՚իյնայ։ Խոճային աղաղակէն և վայնասունէն բոլոր կարաւանը անոր օգնութեան կը գիմեն, ու կ՚ազատեն զան։ Քանի մը վայրկենէ ետև՝ Խոճային խելքը գլուխը գալով պոռայ, «Ո՛վ Մահմէտականք, տեսա՛ք ինչպէս այս անպուաթ ուղտը ապերախտութիւն ըրաւ. բռնեցէ՛ք զան որ մորթեմ»։

8.

Օր մը՝ Խոճա Նասրէտտին էֆէնտին վաճառականը պատանելու ժամանակը՝ մարդու մը պատահիցաւ որ խրեն այս հարցումը ըրաւ. «Այսօր լուսնին ՅՕՆ է թէ չորսը։ — Չեմ գիտեր, պատասխանեց Խոճան, որովհետև ո՛չ առած ունիմ և ո՛չ ծախած»։

9.

Օր մը՝ Խոճա Նասրէտտին էֆէնտին սանդուխ մը կը շալկէ, մինչև պարտէզի մը պատը կը տանի և անոր կը կռթնցընէ։ Ինքը վեր ելլելէն ետև՝ սանդուխն ալ վեր կ՚առնու և պարտէզը կը մտնէ։ Պարտիզպանը տեսնելով զան ըսաւ անոր. «Ո՛վ ես դուն, և ինչ կը փնտռես հոս»։ Խոճան շուտ մը սանդուխին մօտենալով կը պատասխանէ. «Ես սանդուխը կը ծախեմ։ — Հոս սանդուխ ծախելու տեղ է, կ՚ըսէ պար-

տիզպանը։ — Անմիտ մարդ, կրկնեց Խօճան, սանդուխը ուր ելլայ՝ կրնայ ծախուիլ»։

10.

Օր մը Խօճա Նասրէտտին էֆէնտին կտակով պատուիրեց որ իր մեռած ժամանակը զինքը հին գերեզմանի մը մէջ թաղեն։ «Ինչո՞ւ համար», հարցուցին իր քովը եղողները։ «Որովհետև, ըսաւ Խօճան, երբ հրեշտակները գան զիս դատելու, պիտի ըսեմ անոնց. «Ինձմէ ինչ կ'ուզէք, զիս գատելու համար եկաք. բայց չէ՞ք տեսներ որ իմ գերեզմանս հին է»։

11.

Օր մը՝ Խօճան իր գրացիէն կաթսայ մը կ'ուզէ ու գործը լմնցընելէն ետև՝ անոր մէջ պզտիկ սան մը կը գտնէ, և անոր տիրոջը կը տանի։ Կաթսային տէրը տեսնելով որ անոր մէջը պզտիկ սան մը կայ՝ կըսէ Խօճային. «Ա՛ա ինչ բան է հոս»։ Խօճան անոր կը պատասխանէ. «Կաթսան ծնաւ զան»։ Ան ժամանակը կաթսային տէրը կ'ընդունի։ Ուրիշ օր մը՝ Խօճան դարձեալ կաթսային հարկաւորութիւն ունենալով, կ'երթայ կ'ուզէ զան. իր տունը կը պահէ ու մէկ մ'ալ չտանիր։ Հինգ օր կ'անցնին, կաթսային տէրը կը նայի որ կաթսան ետ չի գար։ Խօճային տունը կ'երթայ, դուռը կը զարնէ. Խօճան վազելով դուռը կը բանայ և կը հարցընէ անոր թէ՝ ինչ կ'ուզէ. «Ո՞ւր է իմ կաթսաս», կ'ըսէ անոր։ «Ստուած քեզի կեանք տայ, կաթսադ մեռաւ։ — Մի՞թէ կաթսան կը մեռնի՞. — Կաթսային ծընելուն դուն հաճութեամբ հաւատացիր, հիմա անոր մեռնելուն չե՞ս հաւատար», կը պատասխանէ Խօճան։

12

Օր մը Խօշան արաղիլ (լէյլէ) մը առաւ, ու իւր տունը տանելով անոր կատուցը և երկու թաթերը կտրեց ըսելով թէ՝ խիստ երկար են։ Ետքը բարձր տեղ մը նստեցնելով. «Ահա՛, ըսաւ, հիմա թռչնոյ մը կը նմանիս»։

13.

Պասրէտտին էֆէնտին հիւանդ մ'ունէր, որուն որպիսութիւնը իմանալ ուզողներուն այսպէս կը պատասխանէր. «Ան առտու շատ աղէկ էր, հիմա պիտի մեռնի»։

14.

Օր մը Խօշան ծառի մը վրայ կ'ելլէ և կ'ըսկսի կտրել այն ոստը, որուն վրայ ինքը կայներ էր։ Մարդուն մէկը անկէց անցնելով, ըսաւ անոր. «Է՛, ինչ կ'ընես, հիմա վար պիտի իյնաս»։ Խօշան բնաւ պատասխան չի տուաւ, բայց նոյն ժամանակին ոստը կը կտրուի ու Խօշան անոր հետ վար կ'իյնայ։ Ոտքի վրայ ելլելով մարդուն եանէն կը վազէ, ու կ'ըսէ. «Ըսէ՛, նայիմ, մարդ. դուն իմ իյնալս գիտցար, անշուշտ երբ մեռնիլս ալ գիտես...»։ Ու անոր օձիքէն (էաքա) այնպէս բռնեց որ մարդը չկարենալով փախչիլ ըսաւ անոր. «Երբ էշդ ծանր բեռով մը բեռնաւորուած առաջին անգամ փուք արձակէ՝ կենացդ կէսը պիտի կորսուի, երկրորդ անգամին՝ բոլորն ալ պիտի կորսուի»։ Խօշան աս խօսքը միտքը պահեց, ու երբոր իր էշը երկրորդ անգամին փուք արձակեց, գետնի վրայ պառկեցաւ ըսելով. «Ասիկ մեռայ»։ Ու հոն մնաց. բազմութիւնը իր չարս կողմը ժողվեցան, դադաղ մը բերին, ղան մէջը դրին, ու իր տունը տանելու առեն՝ ցեխոտ տեղ մը պատահեցան։ «Ի՛նչպէս, ասկից պիտի անցնինք», ըսին ա-

մենքնին ալ. Խօճան շուտ մը դադաղին մէջէն դլուխը դուրս հանելով ըսաւ. « Ես երբոր ողջ էի, աս ճամբայէն կ'անցնէի »։

15.

Օր մը՝ Խօճան Աղշէհիր քաղաքին մէջ ժաւռ դալու ատեն ըսաւ. « Ասուած իմ, ինծի հազար ոսկի տուր, և եթէ մէկ հատ պակաս ըլլայ՝ չեմ առներ »։ Խօճան Հրէայ դրացի մը ունէր, որ աս խօսքը լսեց, և զան փորձելու համար քսակի մը մէջ ինն հարիւր ինն ոսկի դրաւ, և Խօճային երդէն (պոռնա) վար նետեց։ Խօճան ոսկիով լեցուն քսակ մը տեսնելով, ըսաւ. « Աղօթքս ընդունելի եղաւ »։ Քսակը բացաւ, համրեց ոսկիները. ու տեսնելով որ մէկ հատ մը պակաս է, ըսաւ ինքնիրեն. « Ինծի այսչափ ոսկի տուողը կարող է մէկ հատ մ'ալ աւելի տալու », և զանոնք պահեց։ Ան ատենը Հրէայն բարկացաւ, ու Խօճային տունը դնաց, դուռը զարկաւ և ըսաւ. « Բարի լոյս, Խօճա էֆէնտի, ոսկիներս ինծի տուր։ — Ի՞նչ կ'ըսես, վա՛ճառական. կ'ըսէ Խօճան, դուն խե՞նդ ես։ Ես զանոնք Ասուծմէ խնդրեցի, Ան ալ ինծի տուաւ։ Ասկէ զատ, ինչպէս կ'ըլլայ որ դուն զանոնք սենեակիս մէջ նետես...։— Ա՛հ, իմ սիրելի Խօճաս, հոգիս, ես քեզի կատակ մ'ընել ուզեցի, քու մէկ հատ մը պակաս ըլլայ՝ չեմ ընդունիր ըսելդ լսելով, ես ալ ուզեցի ըղքեզ փորձել. տեսնենք, ըսի, թէ իր խօսքին վրայ կը կենայ. անոր համար աս կատակը ըրի։ — Ես կատակ մատակ չեմ ճանչնար, ըսաւ Խօճան, աս ոսկիները իմն են։ — Շատ աղէկ, պատասխանեց Հրէայն, ուրեմն պէտք է որ դատաստանարանը երթանք։ — Ես ոտքով

պատասխանարանը չեմ երթար »։ Հրէայն կ'երթայ և խոճային ջարի մը կը բերէ։ « Ա՛ս աղէկ է, ըսաւ խոճան, բայց կրնակիս վրայ մուշտակ (+է-ր+) մ'ալ պէտք է »։ Հրէայն կ'երթայ ու մուշտակ մ'ալ կը բերէ. և երկուքնին մէկտեղ կ'ելլեն դատաստանարանը կ'երթան և դատաւորին առջևը կ'ելլեն, որ կըսկսի հարց ու փորձ ընել զանոնք։ « Այս մարդը, կ'ըսէ Հրէայն, իզմէ այսքան ոսկի առաւ, և հիմա կ'ուրանայ առածը »։ Դատաւորը խոճային երեսը կը նայի։ « Ես Աստուծմէ հաղար ոսկի ինդրեցի, կ'ըսէ խոճան, ու Աստուած ալ ինձի տուաւ ուզածս, համբեցի, մէկ հատը պակաս եկաւ։ Ինձի այսքան ոսկի առողը, ըսի ինքիրենս, կրնայ ուրիշ ալ տալ, և ոսկիները պահեցի։ Հիմա, տէր իմ, այս Հրէայն ձեղ պիտի ըսէ թէ՝ վրաս ունեցած մուշտակս և հեծած ջորիս իրն է։ — Հապա որո՞ւն է, ըսաւ Հրէայն։ — Ա՛հ, դարշելի՛ Հրէայ », պոռացին խսկոյն բաղմականները անոր գլուխը կարկուտի պէս հարուածներ իջեցընելով, ու զանխոյտառակ ընելով՝ դուրս վռընտեցին։ Խոճան ջորին և մուշտակն ալ վաստակեցաւ, ու անանցմնալ տունը դարձաւ։

16.

Օր մը՝ Խոճա էֆէնտին հին լաթերով հարստանեցաւ կոչունքի մը գնաց. նայելով որ մէկը իր երեսը չնայիր և ամենևին պատիւ չըներ, վարպետութեամբ մը դուրս ելաւ ու իր տունը գնաց, իր մուշտակը հագաւ և նորէն կոչունքին տունը եկաւ։ Ամենքնին ալ. « Ներս հրամայեցէք, Խոճա էֆէնտի », պոռացին ու զան պատուով մեծարանքով սեղանին պատուելի կողմը նստեցուցին, և « Ասկէ հրամայեցէք, ըսին, Խոճա էֆէնտի, աս կերա-

կարէն Հրամայեցէք։ Ան առեն Խօճան իր մուշտակին
թեզանիքէն բռնելով, «Սիրելի մուշտակս, ըսաւ, Հրա-
մէ, աս ամէնէն ալ կեր։» Երբ քաղմականերուն աս բանս
տեսան, հարցուցին իրեն թէ ինչ է պատճառը։ «Ըստ
օրում՝ աս մեծարանքը և պատիւը մուշտակիս համար են,
ըսաւ, պէտք է որ կերակուրներն ալ մուշտակս ուտէ»։

17.

Դարէտին էֆէնտին օր մը քաղաքի մը մէջ գտնուելով՝ տեսաւ որ ամէն մարդ ուտելու խմելու եռեռէ է. իրեն ալ հրամէ ըրին և տեսակ տեսակ ուտելիքներ բերին։ Նոյն տարին սովի տարի էր։ Խօճան կ'ուտէ կը խըմէ ինքն իրեն ըսելով. «Ա՛հ, աս ինչ առատութիւն է աս քաղաքիս մէջ». ու պատճառը կը հարցընէ անոնց։ «Ա՛նմիտ, կը պատասխանեն անոր, այսօր Պայրամ է, և ամէն մարդ իր տունը ըստ կարի կերակուր եփել կուտայ և կը բերէ, ասոր համար որ այսչափ առատ կերակուր կայ։— Երանի թէ ամէն օր Պայրամ ըլլար», կ'ըսէ Խօճան։

18.

Օր մը մէկը Խօճային գալով. «Աչքդ լո՛յս, Խօճա էֆէնտի, ըսաւ. կինդ զաւակ ծնաւ։ — Եթէ կինս զաւակ մը բերաւ ինծի, պատասխանեց Խօճան, փառք և գոհութիւն մատուցի Աստուծոյ, բայց քեզի ինչ»։

19.

Օր մը մէկը եկաւ Խօճային էշդ խնդրելու։ «Կեցցիր՝ հոս, կ'ըսէ Խօճան երթամ հարցնեմ թէ կ'ուզէ գալ։ Եթէ հաճի՝ հիմա կը բերեմ»։ Խօճան ներս կը մտնէ, քանի մը վայրկեան հոն կը կենայ, ետքը կու գայ, կ'ըսէ. «Էշս չուզեր կոր գալ, ըսելով թէ՝ եթէ զիս տնոնց ձեռքը յանձնես, ոչ միայն զիս չարաչար պիտի ծեծեն, հապա կնոջդ ալ հայհոյութիւն պիտի ընեն»։

20.

Օր մը Խոճան իր էշը հեծած պարտէզը երթալու առենը՝ ճամբան սախպուեցաւ Ջուր թափել։ Վերարկուն կը հանէ և իշուն համեմին վրայ կը դնէ։ Նոյն միջոցին զոզ մը գալով անոր վերարկուն կ՚առնու և կը փախչի։ Խոճան ետ դառնալով կը տեսնէ որ իր վերարկուն աներ. ևոյթ է եղեր։ Անմիջապէս իշոյն համեմը կը հանէ վերայէն և իր վրայ կ՚առնու. ետքը իշոյն խարազանով ծեծելով. «Տուր իմ վերարկուս, կ՚ըսէ, որ ես ալ քու համեմդ տամ»։

21.

Օր մը Խոճա էֆէնտին իր էշը կորսնցընելով, մէկու մը հարցուց թէ տեսած է. «Էշէ այս ինչ փոզոցը տեսայ, ըսաւ մարդը, որ զատաւոր եղեր էր։ — Սատոյզ է, ըսաւ Խոճան, գիտէի որ զատաւոր պիտի ըլլար. որովհետև երբ իրեն դաս կու տայի, ականջները կը անկէր որ մտիկ ընէ»։

22.

Օր մը մարդուն մէկը Խոճային տունը եկաւ և իր էշը ուզեց։ «Տունը չէ, ըսաւ Խոճան»։ Նոյն վայրկեանին՝ էշը ըստ գիպաց սկսաւ զոռալ։ «Ի՞նչպէս կ՚ըսես, ըսաւ մարդը, թէ էշդ տունը չէ. ահա ներսը կը զոռայ։ — Ի՞նչ զարմանալի մարդ ես դուն, ըսաւ անոր Խոճան իշոյն կը հաւատաս, և ինձի չե՞ս հաւատար՝ ճերմակ մորուքէս չամչցած»։

23.

Խոճան օր մը իր կնոջը հարցուց թէ՝ ուսկից կը ճանչնայ թէ մարդ մը մեռած է թէ ոչ։ «Երբոր ձեռքերը և ոտքերը պաղած փայտ կտրին», կը պատասխանէ կնիկը։ Օր մը Խոճան փայտ կտրելու համար լեռը եր-

թալով, տեսաւ որ իր ոտքերը և ձեռքերը կը ատէին։ «Ուրեմն ահա մեռայ», ըսաւ իսկոյն, ու ծառի մը տակը պառկեցաւ։ Գայլերը Խօճային էշը մինակ տեսնելով, վազեցին և սկսան փարատել զան։ Խօճան իր պառկած տեղէն. «Գտաք որսեցնիդ, պուռայ անոնց, որովհետև իշուն տէրը մեռած է»։

24.

Գիշեր մը Խօճան հանդարտութեամբ պառկած ատենը կը լսէ որ տանը դրան առջևը կռիւ կ'ընեն. «Ելէր, կնիկ, կ'ըսէ, ճրագը վառէ՝ որ տեսնենք թէ ինչ է աս կռիւը։ — Պառկէ տեղդ, էրիկ, կ'ըսէ կինը, ատնոնք ինչ որ կուզեն՝ թող ընեն»։ Բայց Խօճան անոր ականջ չկախելով՝ վերմակը (եօրքան) իր ուսերուն վրայ կ'առնու և կ'երթայ։ Մարդ մը զան տեսնելով, անոր վերմակը կը յափշտակէ ու կը փախչի, և կռիւը կը վերջանայ։ Խօճան պաղէն սառելով ու դողդողալով ներս կը մտնէ, և իր կնիկը կը հարցնէ անոր թէ ինչ էր կռուոյն պատճառը։ «Կռուոյն պատճառը մեր վերմակն է եղեր, կը պատասխանէ Խօճան, քանզի զան վրայէս յափշտակելնուն պէս՝ ամեն աղաղակները դադրեցան»։

25.

Օր մը Խօճային կինը բաղնիք պիտի երթար, Խօճան քովը խիստ քիչ ստակ ունենալուն համար դնայ անկինմը պահուեցաւ, որ կինը զինքը չտեսնէ՝ բայց կընիկը ադինանդին փնտռած ատենը դտնելով զան կ'ըսէ. «Ահա՛ Խօճան, բռնեցէք։ — Ես մեռայ, կը պատասխանէ Խօճան, և ահա բոլոր ունեցած ստակս»։

26.

Խօճան օր մը իր մէկ քանի բարեկամներուն հետ ձկնորսութեան երթալով, ուռկանը ծովը ձգած ատենին

ինքզինքը անոր մէջ նետեց։ Անմիջապէս բարեկամնեքն բռնեցին զան։ «Խոճա, ինչ կ'ընես» ըսին։ «Ինքզինքս ձուկ կարծեցի, պատասխանեց Խոճան։»

27.

Գիւղացիին մէկը օր մը Խոճային նապաստակ մը ընծայ բերաւ. Խոճան անոր փոխարէն մեծ պատիւ ըրաւ ու ապուռ մ'ալ եփել տուաւ որ ուտէ։ Շաբաթ մը ետքը նոյն մարդը գարձեալ Խոճային տունը եկաւ. Խոճան նորէն անոր պատիւ ըրաւ։ Քանի մ'օրէն եաւ՝ մէկ քանի ճամբորդներ եկան Խոճային տունը ճնալու. Խոճան հարցուց անոնց թէ՝ «Դուք ո՞վ էք։ — Մենք քեզ նապաստակ բերողին դրացիներն ենք», պատասխանեցին։ Խոճան ասոնք ալ պատուեց։ Քանի մը օր ալ անցնելէն եաւ՝ ուրիշ հիւրեր եկան անոր տունը։ «Դուք ո՞վ էք», ըսաւ անոնց Խոճան։ «Մենք ալ պատասխանեցին հիւրերը, քեզ նապաստակ բերողին դրացիներուն դրացիներն ենք։ — Ա՛հ, բարով եկաք», ըսաւ Խոճան ու անոնց առջև անօթի մը մէջ տաք ջուր դրաւ, երբ հիւրերը աստը վրայ կը զարմանային. «Աս ջուրը, ըսաւ Խոճան, նապաստակին ջրոյն ջուրն է»։

28.

Օր մը Նասրէտտին էֆէնտին տունը դառնալու ատեն՝ քանի մը մուրացկաններ տեսնելով, ըսաւ անոնց. «Պարոններ, հրամայեցէք մեր տունը երթանք, և ատ գիշեր հոն ընթրեանք»։ Իր խուցը կը հրաւիրէ զանոնք. բոլոր առաջ ինքը կը մտնէ և իր կնոջը կ'ըսէ. «Քանի մը օտարականներ բերի. գնա՛ անոնց ապուռ մը եփէ։ — Է՛հ, Խոճա էֆէնտի, ըսաւ իր կինը, տուներնիս ո՛չ իւղ կայ և ո՛չ բրինձ, ինչպէս հեռդ բերած մարդիկներուդ ապուռ շինեմ։ — Դնիկ, կը պատասխանէ Խոճան.

պուռին անօթը ինծի տուր », ու զան առնելով հիւրե-
ղուն առջևը կը տանի ու կըսէ. « Ներեցէք, պարոններ,
եթէ մեր տունը իւղ և բրինձ ունենայի, այս անօթով
ձեզի ապուռ պիտի բերէի ».

29.

Հանդուցեալ Խոճա էֆէնտին դատաւոր եղած ա-
տենը՝ երկու հոգի իր առջին կը ներկայանան, որոնց մէ-
կը զմիւսը կ'ամբաստանէ ըսելով թէ իր ականջը խածաւ.
« Ո՛չ, կ'ըսէ միւսը, ես չի խածի զան, ան ինքզինքը
խածաւ։ — Հիմա դացէք, ու քիչ մը ետքը եկէք, կ'ը-
սէ Խոճան, ու ձեզ պատասխան մը կու տամ։ Դատա-
խաղները ելան դացին։ Խոճան առանձին տեղ մը կը
քաշուի, իր ականջն կը բռնէ, ու կ'ըսէ ինքն իրեն.
« Նայիմ, պիտի կրնամ ականջս խածնելու », բայց զան
քաշելու ժամանակ՝ կրնակին վրայ կ'ինոյ, և գլուխը
թեթև վէրք մը կ'ընդունի։ Վէրքը կապելէն ետև իր
դատաստանատունը կը դառնայ։ Դատախաղներն ալ նո-
րէն առջևը կ'ելլեն և իրենց դատը կը նորոգեն։ « Հի-
մա մեր դատը ոչ թէ ականջ խածնելուն, կ'ըսէ Խոճան,
այլ իմ գլուխս վիրաւորուելուն վրայ պիտի ընենք ».

30.

Օր մը Խոճա Ֆասրէտտին էֆէնտին տունը՝ գրա-
նուած ատեն՝ աղքատ մը եկաւ իր դուռը զարկաւ։ « Ի՞նչ
կը խնդրես », կը հարցընէ Խոճան վերէն։ « Վար իջիր,
ըսելիք ունիմ », կը պատասխանէ աղքատը։ Խոճան վար
կ'իջնայ ու անոր կը հարցընէ թէ ինչ կուզէ։ « Ողորմու-
թիւն կուզեմ », կ'ըսէ աղքատը։ « Շատ աղէկ վեր ե-
կու, կ'ըսէ Խոճան։ Աղքատը վեր ելլելուն պէս՝ Խոճան,
« Ասուած տայ », կ'ըսէ։ « Էֆէնտի, կ'ըսէ աղքատը,
ինչո՞ւ ադ խօսքը իմ վար եղած ժամանակս չ'ըսիր։ —

Դուն ալ, կը պատասխանէ Խօճան, իմ վեր գանուած տեղս ինչո՞ւ վար գիս կանչեցիր »։

31.

Օր մը Խօճան խումբ մը ուսումնականաց հանդիպելով, կ'ըսէ անոնց. « Քալեցէք իմ տունս եկէ՛ք », ու գանոնք իր տանը առջև բերելով, « Դուք աս տեղ քանի մը վայրկեան նստեցէք, կ'ըսէ անոնց, ես առաջ մտնեմ »։ Ներս մտնելուն պէս. « Քալէ՛, կ'ըսէ իր կնոջը, սա դուռը գտնուած մարդիկը ճամբէ »։ Կինը դուրս կ'ելլէ ու կ'ըսէ. « Խօճան հոս չէ։— Ի՞նչպէս աս խօսքը կրնաս ըսել, կ'ըսեն իրեն, հիմա մեզի հետ մէկտեղ եկաւ։ — Ո՛չ, չեկաւ, կը կրկնէ կինը։ — Այո՛, եկաւ », կ'ըսեն ուսումնականները, ու մէջերնին մեծ կռիւ մը կը բացուի։ Խօճան, որ վերէն մութիկ կ'ընէր, յանկարծ գլուխը պատուհանէն դուրս հանեց ու ըսաւ. « Ո՛վ մարդիկ, ինչ է այդ կռիւը, գուցէ տունը երկու դուռ ունի, ու Խօճան մէկ դռնէն մտնելով, մէկալէն դուրս ելաւ »։

32

Խօճա Նասրէտտին էֆէնտին ամուսնանալու օրը իր ազգականները, գրացիները և բարեկամները հրաւիրեց, որոնք եկան և սկսան ուտել խմել, բայց իրենցմէն և ոչ մէկը Խօճային ըսաւ թէ՝ « Դուն ալ եկու կեր »։ Խօճան աս բանիս բարկացաւ և առաւ քալեց։ Քանի մը վայրկենէ ետև՝ նայեցան որ Խօճան չի կայ։ Բոլոր հրաւիրեալները ասդիս անդին վեր վար փնտռեցին, վերջապէս գտան. « Ո՞ւր ես, Խօճա էֆէնտի, ըսին։ « Կորիք ասկէ, ըսաւ Խօճան, հարսանեաց յարկիքը ուտողը թող փեսայ ըլլայ ».

spec 25